

Անմոռանալի օր «Էրեբունի» արգելոց-թանգարանում

Այս մայիսի 14-ին, արևամուտից մինչև կեսգիշեր Եվրոպայով մեկ թանգարանները հասարակությանը մշակութային ծառայություններ մատուցելուց բացի հնարավորություն էին ստացել հանդես գալ որպես բեմահարթակներ: Ավելի քան 3 հազար եվրոպական թանգարաններ պատրաստել էին բազմաթիվ մեծ ու փոքր միջոցառումներ՝ համերգային ծրագրերով: Բայց թերևս միայն մեր հանրապետությունում էր, որ պետական ակադեմիական երգչախումբը ևս դարձել էր համաեվրոպական ակցիայի մասնակից և գործընկեր:

Մեր հասարակության մի սովոր քանարկություն նախընտրել էր «Էրեբունի» թանգարանը. նրանք հնարավորություն ունեցան թանգարանի մշտական ցուցադրությունից զատ դիտել նյութեր և ունկնդրել պատմություններ 1-ին Էրեբունի-Երևանի մասին: Հուշեր պատմեցին պատմ. գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյանը, արգելոցի 1-ին տնօրեն Սուրեն Նարիմանյանը, երաժշտական ռեժիսոր Ֆելիքս Արամյանը և Ռիմա Դեմիրճյանը:

Երեկոն նշանավորվեց Հայաստանի ակադեմիական երգչախմբի անմոռանալի կատարումներով՝ մաեստրո Հովի. Չեքիջյանի ղեկավարությամբ: Հնչեցին Էդգար Հովհաննիսյանի «Հայաստան», Կոմիտասի «Ել-ել», «Լուսնյակը սարի տակին», «Անձրևն եկավ», «Եղնիկ», «Երևան բաղ եմ արել», Մակար Եկմալյանի «Կիլիկիա» և «Զեյթունցիներ» կատարումները: Երգչախմբի ելույթն ավարտվեց Երևանի օրհներգով՝ «Երևան Էրեբունի»-ով՝ թանգարանի գիշերային այցելուների երկար ժամանակ չդադարող որոտընդոստ ծափերի ներքո:

Թանգարանի հրավերին արձագանքել և միջոցառումն իրենց ներկայությամբ պատվել էին ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մարի Յովանովիչն ու դեսպանության մշակութային կցորդ Կարեն Ռոբլին:

Թանգարանների եվրոպական գիշերը արգելոց-թանգարանն ունեցել է 1100 այցելու՝ մայիսի 14-ի ժամը 18:00-24:00-ի սահմանում: